Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ ____

«Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի

Երկու հազար տասնյոթ թվականի օգոստոսի 15-ին ժամը 15:00-ին, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց 28 հասցեում տեղի ունեցավ «Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ «Ընկերություն») բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը (այսուհետ «Ժողով»):

Ժողովին մասնակցում էր Ընկերության թվով 418 217 (չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր տասնյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերերից թվով 373 024 (երեք հարյուր յոթանասուներեհ հազար քսանչորս) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի (Ընկերության կանոնադրական կապիտալի 89,193887 %) սեփականատեր՝ «ԷԼԻՏ-ՆՆ ՖԻՆԱՆՍ ՔԱՄՓՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Ընկերության կառավարող կազմակերպություն՝ «ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, որի անունից հանդես է գալիս տնօրեն Կարեն Սաֆարյանը:

Ապահովված էր Ժողովի անցկացման համար անհրաժեշտ քվորումը (89,193887 %):

Ժողովին մասնակցում եր ընկերության խորհրդի նախագահ Գոհար Քալանթարյանը, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վանիկ Հովսեփյանը:

Ժողովը նախագահում էր խորհրդի նախագահ Գոհար Քալանթարյանը՝ Դոնարա Սահամյանի քարտուղարությամբ:

Օ ր ա կ ա ր գ

1. «Ալմաստ» ԲԲԸ տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և գործադիր մարմնի իրավասությունները կառավարող կազմակերպությանը՝ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ին փոխանցումը,
2. ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում գտնվող անշարժ գույքի գրավադրում:

ԼՍԵՑԻՆ – հարց 1՝

Առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Կարեն Սաֆարյանը, ով առաջարկեց 2017 թվականի սեպտեմբերի 1-ից Ընկերության գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարող կազմակերպությանը՝ «Արինս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ինչի կապակցությամբ նաև վաղաժամկետ դադարեցնել Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վանիկ Հովսեփյանի լիազորությունները:

Ժողովի նախագահ Գոհար Քալանթարյանն առաջարկեց Ընկերության անունից լիազորել Ռուդիկ Մկրտումյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AP0488636, տրված 26.07.2016 թվականին 046-ի կողմից, հաշվառված. Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, ՆԱՏԻ 1 փողոց, շենք 8, բնակարան 2 հասցեում) «Արինս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ համաձայնեցնել և կնքել գործադիր մարմնի իրավասությունների փոխանցման մասին պայմանագիր:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 373 024 ձայն Դեմ - 0 ձայն Ձեռնպահ - 0 ձայն

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ Ժողովը որոշեց՝

1.1. Վաղաժամկետ դադարեցնել Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վանիկ Հովսեփյանի լիազորությունները և նրան ազատել զբաղեցրած պաշտոնից 2017 թվականի սեպտեմբերի 1-ից, վերջին աշխատանքային օր սահմանելով 2017 թվականի օգոստոսի 31-ը:

1.2. 2017 թվականի սեպտեմբերի 1-ից Ընկերության գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարող կազմակերպությանը՝ «Արինս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (գրանցման համար՝ 286.110.04868 գրանցման ամսաթիվ՝ 12.02.2003թ., գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղաք, Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց 13, 13/1)՝ կնքելով համապատասխան պայմանագիր:

1.3. Ընկերության անունից լիազորել Ռուդիկ Մկրտումյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AP0488636, տրված 26.07.2016 թվականին 046-ի կողմից, հաշվառված. Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, ՆԱՏԻ 1 փողոց, շենք 8, բնակարան 2 հասցեում) «Արինս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ համաձայնեցնել և կնքել գործադիր մարմնի իրավասությունների փոխանցման մասին պայմանագիր:

1.4. Սահմանված կարգով համապատասխան փաստաթղթեր ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշումից բխող փոփոխության պետական գրանցում իրականացնելու համար:

1.5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՍԵՑԻՆ – հարց 2՝

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Կարեն Սաֆարյանը, ով առաջարկեց Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում գտնվող անշարժ գույքը «Ռեդուտ Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի խնդրանքով գրավ դնել ի ապահովումն «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ի (իրավահաջորդ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ) և «Ռեդուտ Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի միջև 28.12.2016թ. կնքված թիվ C-2016/2 Իրավունքի զիջման (Ցեսիայի) գլխավոր պայմանագրից (տարաժամկետ վճարման պայմանով), կնքված և կնքվելիք ցանկացած փոփոխություններով, անկախ փոփոխությունների բնույթից և ծավալից, բխող պարտավորությունների կատարման:

Առաջարկվեց համաձայնություն տալ գրավի առարկայի նկատմամբ արտադատական կարգով գրավի առարկայի նկատմամբ բռնագանձում տարածելու վերաբերյալ, ինչպես նաև Ընկերության անունից կնքված և կնքվելիք պայմանագրերից և/կամ համաձայնագրերից բխող վեճերի դեպքում՝ վեճերի լուծումը հանձնել Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 373 024 ձայն Դեմ - 0 ձայն Ձեռնպահ - 0 ձայն

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Ժողովը որոշեց՝

2.1. Համաձայնություն տալ ի ապահովումն «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ի (իրավահաջորդ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ) (այսուհետ՝ նաև Բանկ) և «Ռեդուտ Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի միջև 28.12.2016թ. կնքված թիվ C-2016/2 Իրավունքի զիջման (Ցեսիայի) գլխավոր պայմանագրից (տարաժամկետ վճարման պայմանով), կնքված և կնքվելիք ցանկացած փոփոխություններով, անկախ փոփոխությունների բնույթից և ծավալից, բխող պարտավորությունների կատարման՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում գտնվող անշարժ գույքի (սեփականության իրավունքի գրանցման թիվ 2094827 վկայական, տրված 26.01.2006 թվականին) գրավադրման գործարքի կնքմանը:

2.2. Համաձայնություն տալ Ընկերության անունից կնքված և կնքվելիք պայմանագրերից և/կամ համաձայնագրերից բխող վեճերի դեպքում՝ վեճերի լուծումը հանձնել Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին:

2.3. Սույն որոշման հիման վրա Գրավի պայմանագիր և/կամ Գրավի պայամանգրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիր կնքելու դեպքում համաձայնություն տալ գրավի առարկայի նկատմամբ արտադատական կարգով գրավի առարկայի նկատմամբ բռնագանձում տարածելու վերաբերյալ:

2.4. Համաձայնություն տալ սույն որոշման հիման վրա կնքվելիք պայմանագրերը և/կամ համաձայանագրերը կնքել Բանկի կողմից առաջարկվող, Ընկերության անունից պայմանագրերը և/կամ համաձայնագրերը կնքող անձի համար ընդունելի ցանկացած պայմանով:

2.5. Հանձնարարել Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վանիկ Հովսեփյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշմամբ սահմանված գործարքների կնքման և ձևակերպման համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

2.6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ժողովում ընդգրկված հարցերը սպառվեցին, Ընկերության արտահերթ ժողովը հայտարարվեց փակված:

Ժողովի նախագահ՝ _____ Գոհար Քալանթարյան

Ժողովն արձանագրող քարտուղար՝ _____ Դոնարա Սահակյան

Սույն արձանագրությունը կազմված է 15.08.2017թ. դրությամբ, 4 օրինակից և բաղկացած է 3 թերթից: